

## **«Ալմաստ» ԲԲԸ**

Հասցե՝ ՀՀ, քաղաք Երևան, Ռուբինյանց 28, հեռ.՝ (+37410) 24-35-20,  
Էլեկտրոնային հասցե՝ [account@almastcompany.com](mailto:account@almastcompany.com)

«01» փետրվարի 2022 թվական

Հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 127-րդ հոդվածը, ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի թիվ 68-Ն որոշմամբ հաստատված «Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» կանոնակարգ 4/04-ի 50-րդ կետը, 24-րդ գլուխը, կից ներկայացնում ենք «Ալմաստ» ԲԲԸ-ի էական փաստերը և տեղեկությունները:

Առդիր՝ 1 թերթ:

«Ալմաստ» ԲԲԸ կառավարող կազմակերպություն՝  
«Արինս Գրուպ» ՍՊԸ  
Լիազորված անձ՝

Արտակ Անանյան

# **«Ալմաստ» ԲԲԸ**

Հասցե՝ ՀՀ, քաղաք Երևան, Ռուբինյանց 28, հեռ.՝ (+37410) 24-35-20,  
Էլեկտրոնային հասցե՝ [account@almastcompany.com](mailto:account@almastcompany.com)

## **Էական փաստեր և տեղեկություններ**

«Ալմաստ» ԲԲԸ բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովը գումարվելու է 2022 թվականի փետրվարի 23-ին, ժ. 12:00, իր գտնվելու վայրում՝ ք.Երևան, Ռուբինյանց փողոց, թիվ 28 հասցեում:

«Ալմաստ» ԲԲԸ բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի օրակարգում հետևյալ հարցն է.

1. «Ալմաստ» ԲԲԸ արտաքին աուդիտն իրականացնող անձի ընտրության հարցը:

«Ալմաստ» ԲԲԸ բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվելու է 2022 թվականի փետրվարի 4-ի դրությամբ:

«Ալմաստ» ԲԲԸ բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայանալ անձը հաստատող փաստաթղթով, իսկ լիազորված անձ լինելու դեպքում՝ նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով «Ալմաստ» ԲԲԸ բաժնետիրոջ կողմից տրված լիազորագրով:

Օրակարգում ընդգրկված հարցի հետ կապված փաստաթղթերին և նյութերին ծանոթանալու համար կարող եք դիմել ք.Երևան, Ռուբինյանց փողոց, թիվ 28 հասցեով:

«Ալմաստ» ԲԲԸ կառավարող կազմակերպություն՝

«Արինս Գրուպ» ՍՊԸ

Լիազորված անձ՝

Արտակ Անանյան